# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը*

Խաչատուր Խաչատրյան, շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետ

Էլյանորա Գրիգորյան, շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

*2. Գործուղման վայրը և ժամկետները.*

Ժնև, Շվեյցարիայի Համադաշնություն, 11.12.2023թ.-16.12.2023թ.

*3. Հրավիրող կողմը.*

Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով

***4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).***

Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին (Էսպո) կոնվենցիայի կողմերի 9-րդ և կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրության 4-րդ նստաշրջաններին

***5. Քննարկված թեմաները, հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.***

1) Էսպոյի կոնվենցիայի կողմերի 9-րդ և կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրության 4-րդ նստաշրջաններին քննարկվել է հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ 2021-2023 թթ. բյուջեի

հաշվետվությունը, աշխատանքային պլանը, կոնվենցիայի համապատասխանության հանձնաժողովի կառուցվածքը և գործառույթները, Կողմերին վերաբերող համապատասխանության որոշումները և այլն: Քննարկված բոլոր հարցերը և որոշումների նախագծերը հասանելի են https://unece.org/environmental-policy/events/meeting-parties-espoo-convention-9th-session-and-meeting-parties հղմամբ:

Հայաստանի Հանրապետության՝ Էսպոոյի կոնվենցիայի և կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրության համապատասխանության մասով կողմերի հանդիպման քննարկմանն էր դրվել IX/4b-V/4b որոշման նախագիծը:

IX/4b-V/4b որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանը նախապես ներկայացրել էր փոփոխության առաջարկություններ՝ կից փաստաթղթով ներկայացնելով նաև համապատասխան հիմնավորումները (փոփոխությունների առաջարկությունը և հիմնավորումները հասանելի են https://unece.org/sites/default/files/2023-12/ARM_amendment_proposals_to_decision_IX.4b_V.4b.pdf և https://unece.org/sites/default/files/2023-12/ARM_Clarifications_re_decision_IX.4d_V4d.pdf հղումներով:

Որոշման քննարկումից առաջ Հայկական պատվիրակության անդամները հանդիպեցին որոշման նախագիծը պատրաստած, Էսպոյի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի նախագահի և որոշ անդամների հետ: Կոմիտեի նախագահը խնդրեց հայկական պատվիրակությանը հնարավորության դեպքում չպնդել որոշման մեջ Հայկական կողմի առաջարկած փոփոխությունները, քանի որ խիստ անցանկալի կլիներ որոշման վերաբերյալ կոնսենսուս չունենալը և որոշումը քվեարկության դնելը: Նախագահն ասաց, որ Բելգիայի պատվիրակությունը ևս ընդառաջել է Կոմիտեին՝ խոստանալով չպնդել Բելգիային վերաբերող որոշման վերաբերյալ բելգիական կողմի առաջարկությունները:

Հայաստանին վերաբերող IX/4b-V/4b որոշման նախագծի քննարկման ժամանակ հայկական պատվիրակությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման վերաբերյալ փոփոխությունների առաջարկությունը պնդելու դեպքում կոնսենսուս չէր լինելու և առաջարկը դրվելու էր քվեարկության, որի դեպքում փոփոխություններին պատվիրակությունների մեծ մասի կողմ քվեարկելու հավանականությունը չափազանց փոքր էր, ինչպես նաև ընդառաջելով համապատասխանության կոմիտեի խնդրանքին, հայտարարեց, որ IX/4b-V/4b որոշման նախագծում արծարծված մի շարք հարցերի վերաբերյալ Հայաստանը ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն, մեկնաբանություններ և պարզաբանումներ: Շեշտվեց նաև, որ նախագծում նշված հարցերի մեծ մասը ենթակա է կարգավորման երկրորդային օրենսդրությամբ, ինչպես նաև այն, որ Հայաստանը համաձայն չէ որոշման նախագծի 4-րդ կետի «ա» կետում և 4-րդ կետի «գ» կետում նշված դիտողությունների հետ, ու թեպետ Հայաստանը որոշման նախագծի վերաբերյալ փոփոխությունների առաջարկություններ է ներկայացրել, այնուամենայնիվ, առաջնորդվելով համագործակցության ոգով, հարցը քննարկելով նաև Համապատասխանության կոմիտեի անդամների հետ, Հայաստանը չի պնդում, որ առաջարկները ներառվեն որոշման մեջ, թեև, ինչպես նշվեց, Հայաստանը չի համաձայնել կոմիտեի դիտարկումների հետ, որոնք արտացոլված են դրանում: Հայկական կողմը նաև խնդրեց հայտարարությունը ներառել հանդիպման ամփոփիչ արձանագրության մեջ:

2) Կոնվենցիայի ուղղումների (փոփոխությունների) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացման հարցի հետ կապված ելույթ ունեցավ հայկական պատվիրակության անդամ տիկին Էլյանորա Գրիգորյանը՝ մատնանշելով Կոնվենցիայի 2-րդ ուղղման չվավերացման պատճառները, միաժամանակ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս վերադարձել է Կոնվենցիայի 1-ին ուղղման վավերացման նպատակահարմարության հարցի քննարկմանը:

3) 2024-2026 թվականների աշխատանքային ծրագրի քննարկման ժամանակ Շվեյցարիայի Համադաշնության ներկայացուցիչը հայտարարեց, որ Շվեյցարիան ֆինանսավորելու է կենտրոնական Ասիայի երկրներին, Վրաստանին և

Ադրբեջանին՝ ՌԷԳ գործնական ներդրման գործընթացը: Հայկական պատվիրակության անդամ տիկին Էլյանորա Գրիգորյանը, բանակցելով Շվեյցարիայի Համադաշնության ներկայացուցչի հետ, պայմանավորվածություն ձեռք բերեց առ այն, որ ֆինանսավորվելիք երկրների թվում կլինի նաև Հայաստանի Հանրապետությունը, ինչից հետո Շվեյցարիայի Համադաշնության ներկայացուցչի առաջարկության հիման վրա համապատասխան փոփոխություն կատարվեց 2024-2026 թվականների աշխատանքային ծրագրում:

4) Կողմերի հանդիպման բարձր մակարդակի հատվածը տեղի ունեցավ 2023 թվականի դեկտեմբերի 14-ից 15-ը: Նիստը նախագահողը հայտարարեց այն երկրների ցանկը, որոնք ցանկություն էին հայտնել հայտարարությամբ հանդես գալ: Երկրների թվում էր նաև Ադրբեջանի Հանրապետությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ելույթը նախորդում էր Ադրբեջանի ելույթին և պարզ չէր՝ արդյոք Ադրբեջանի Հանրապետության հայտարարությունում լինելու էր անդրադարձ Հայաստանի Հանրապետությանը, թե ոչ, հայկական պատվիրակության անդամ պարոն Համբարձում Մինասյանը բարձր մակարդակի հատվածը նախագահող Մոլդովայի շրջակա միջավայրի նախարարին խնդրեց միաժամանակ հանել Հայաստանի Հանրապետության ելույթը՝ պայմանով, որ անհրաժեշտության դեպքում ելույթի իրավունքը նորից կվերականգնվի: Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչը հայտարարություն արեց դեկտեմբերի 15-ի երեկոյան: Հայտարարությունը կցվում է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը, թեպետ Հայաստանի Հանրապետությանը չհիշատակելով, այնուամենայնիվ հայտարարության մեջ ոչ կառուցողական լինելու մեղադրանք հնչեցրեց Կոնվենցիայի Կողմերից մեկի (ակնհայտ է, որ խոսքը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությանը՝ Երասխում նախատեսվող սև մետաղի ջարդոնի գործարանի հետ կապված) հասցեին, հայկական պատվիրակության կողմից տեղում որոշում կայացվեց վերականգնել հայտարարություն անելու իրավունքը, ինչի մասին պարոն Համբարձում Մինասյանը տեղեկացրեց նիստը նախագահող Մոլդովայի շրջակա միջավայրի նախարարին: Դեկտեմբերի 15-ի երեկոյան հայկական պատվիրակության կողմից ՀՀ

հայտարարությունը լրացվեց, պատվիրակության անդամ պարոն Արամ Արամյանի կողմից հայտարարությունում ավելացվեց Ադրբեջանի Հանրապետության հայտարարությունում հնչեցված մեղադրանքներին համաչափ պատասխան:

Հայկական պատվիրակությունը հայտարարություն արեց դեկտեմբերի 16-ի առավոտյան (հայտարարությունը կցվում է):

Դեկտեմբերի 16-ին շարունակվեց հանդիպման բարձր մակարդակի հատվածը: Հայաստանի Հանրապետությանը վերաբերող որոշման քննարկման ժամանակ հայկական պատվիրակությունը ձայն խնդրեց և կրկնեց որոշման որոշ դրույթների հետ համաձայն չլինելու մասին հայտարարությունը, որը նիստը նախագահողը խոստացավ ներառել արձանագրության մեջ:

Բարձր մակարդակի հատվածում մնացած այն որոշումների քննարկմանը և քվեարկությանը, որոնց վերաբերյալ Կողմերի միջև կոնսենսուս չկար, հայկական պատվիրակությունը չի մասնակցել:

5) Սույն կողմերի հանդիպումն ուշագրավ էր այն հանգամանքով, որ միանգամից մի քանի երկրների վերաբերյալ նախապատրաստվել էր Կոնվենցիայի անհամապատասխանության որոշումներ այն հիմքով, որ համապատասխան երկրները (Բուլղարիա, Չեխիա, Բելգիա) իրենց տարածքներում ատոմային էլեկտրակայանների շահագործման ժամկետների երկարաձգման գործընթացի ժամանակ խախտել են Կոնվենցիայի համապատասխան հոդվածները:

***6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.***

1) Կողմերի 9-րդ հանդիպման ժամանակ ընդունված որոշումները հասանելի են https://unece.org/environmental-policy/events/meeting-parties-espoo-convention-9th-session-and-meeting-parties հղումով: Հայաստանի վերաբերյալ կողմերի հանդիպման ժամանակ ընդունվել է IX/4b-V/4b որոշումը, որը հասանելի է նույն հղումով:

7. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.*

1) Հայաստանի վերաբերյալ IX/4b-V/4b որոշումների հետ կապված առաջարկվում է կոնվենցիայի քարտուղարությանը ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական այն նորմատիվ իրավական ակտերը և դեռևս չընդունված ակտերի նախագծերը, որոնք անդրսահմանային ազդեցության գնահատման և ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգավորումներ են պարունակում՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան հիմնավորումներով և մեկնաբանություններով, և հնարավորինս աշխատել այն ուղղությամբ որ Կողմերի հաջորդ հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ անհամապատասխանության որոշում չկայացվի,

2) Ուշադրության կենտրոնում պահել Երասխի սև մետաղի ջարդոնի գործարանի հետ կապված հարցը, հետևել դրա հետ կապված Ադրբեջանի Հանրապետության կողմից իրականացվելիք հնարավոր քայլերին և համարժեք քայլեր ձեռնարկել,

3) Ինչպես վերը նշվեց, Կողմերի հանդիպման ժամանակ մի քանի երկրների վերաբերյալ նախապատրաստվել էր Կոնվենցիայի անհամապատասխանության որոշումներ այն հիմքով, որ որոշ երկրներ (Բուլղարիա, Չեխիա, Բելգիա) իրենց տարածքներում ատոմային էլեկտրակայանների շահագործման ժամկետների երկարաձգման գործընթացի ժամանակ խախտել են Կոնվենցիայի համապատասխան հոդվածները: Այս գործընթացից ենթադրվում է, որ ատոմային էլեկտրակայանների շահագործման ժամկետի երկարաձգման գործընթացը գտնվում է Կոնվենցիայի քարտուղարության և համապատասխանության կոմիտեի հատուկ ուշադրության կենտրոնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը ևս պատրաստվում է երկարաձգել Հայաստանի ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը՝ առաջարկվում է դիմել տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարություն և կառավարությանը ենթակա Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե՝ առաջարկելով ուշադրության կենտրոնում պահել նշված հարցը և անհրաժեշտության դեպքում համատեղ քննարկել՝ հետագայում Կոնվենցիայի շրջանակներում անցանկալի որոշումներից խուսափելու նպատակով: Սրա հետ կապված հարկ է նշել, որ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից մշակվել է «Руководство по применимости Конвенции к продлению срока службы атомных электростанций» փաստաթուղթը (հասանելի է https://unece.org/sites/default/files/2022-10/Guidance_LTE_NPP_2106311_R_WEB-Light.pdf հղումով), որն առաջարկվում է հաշվի առնել նշված խնդրի համատեքստում:

Խաչատուր Խաչատրյան

Էլյանորա Գրիգորյան

12.01.2024թ.